

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 14.13/[132421]-12

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-ԻՆ ԺԱՄԸ 16:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ` ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ
ԽՈՐՀՐԴԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին`

Խորհրդի անդամներ`

| | |
|-----------------|--|
| Տ. Սարգսյան | ՀՀ վարչապետ, խորհրդի նախագահ |
| Ա. Աշոտյան | ՀՀ կրթության և գիտության նախարար |
| Ռ. Մարտիրոսյան | ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ |
| Վ. Բարխուդարյան | ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս- քարտուղար |
| Ա. Մինոնյան | Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) ռեկտոր |
| Յու. Սուվարյան | ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հայագիտության և հասարակական գիտությունների ակադեմիկոս-քարտուղար |
| Ա. Մելքոնյան | ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի տնօրեն |
| Ա. Աղասյան | ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի արվեստի ինստիտուտի տնօրեն |
| Ա. Իսահակյան | ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն |
| Լ. Հովհաննիսյան | ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն |
| Ռ. Սաֆրաստյան | ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի տնօրեն |
| Պ. Ավետիսյան | ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն |
| Հ. Դեմոյան | ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հայոց |

ցեղասպանության թանգարանի տնօրեն

| | |
|------------------|---|
| Հ. Գևորգյան | ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի բաժնի վարիչ |
| Է. Մինասյան | ԵՊՀ-ի պատմության ֆակուլտետի դեկան |
| Մ. Գիլավյան | Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետի դեկան |
| Բ. Հարությունյան | ԵՊՀ-ի հայոց պատմության ամբիոնի վարիչ |
| Մ. Կարապետյան | Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հայոց պատմության ամբիոնի վարիչ |
| Գ. Հարությունյան | «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի գործադիր տնօրեն |
| Ա. Միրզախանյան | ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ, խորհրդի քարտուղար |

Հրավիրվածներ՝

| | |
|--------------|--|
| Վ. Զիլավյան | ՀՀ սփյուռքի նախարարի տեղակալ |
| Ս. Տոնոյան | ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետի պաշտոնակատար |
| Ա. Անանյան | ՀՀ վարչապետի խորհրդական |
| Հ. Բերբերյան | ՀՀ վարչապետի մամուլի քարտուղար |
| Ս. Միմոնյան | ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության գլխավոր մասնագետ |
| Վ. Ասլանյան | ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության առաջատար մասնագետ |
| Մ. Պողոսյան | ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության փորձագետ |

Հայագիտության ոլորտի զարգացման 2012-2025 թվականների ռազմավարության
իրականացման միջոցառումների ծրագրով նախատեսված միջոցառումների
ընթացքի մասին

(Ռ. Մարտիրոսյան, Տ. Մարգարյան)

Օրակարգի 1-ին հարցը զեկուցեց ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Ռ. Մարտիրոսյանը և նշեց, որ դեռևս 2003 թվականին առաջին անգամ կայացած միջազգային հայագիտական վեհաժողովի ընթացքում բարձրացվել էին մի շարք կարևորագույն խնդիրներ: Դրանցից առաջինը հայագիտության բնագավառում Հայաստանի և սփյուռքի գիտնականների համագործակցությունն էր, որի նպատակով անհրաժեշտ էր ունենալ՝

1) բազմալեզու նոր ամսագիր:

2) յուրաքանչյուր 3 տարին մեկ անգամ կազմակերպել և անց կացնել միջազգային հայագիտական վեհաժողով:

3) ստեղծել հիմնադրամ, որի միջոցով հնարավոր կլինի աջակցել անհրաժեշտ հետազոտական աշխատանքներին:

Բոլոր երեք ուղղություններով միջոցառումները նախատեսվել և իրականացվում են <<Հայագիտության ոլորտի զարգացման 2012-2025 թվականների ռազմավարության ծրագրի>> շրջանակում, որն ընդունվել է ՀՀ կառավարության 2012 թվականի հունվարի 12-ի արձանագրային որոշմամբ: Այս ծրագրում նախանշված միջոցառումների կատարումն էապես կնպաստի հայագիտության ոլորտի զարգացմանը, պատշաճ մակարդակով համաշխարհային հանրությանը ներկայացմանը:

Քննարկումներից հետո որոշվեց՝ ընդունել ի գիտություն ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Ռ. Մարտիրոսյանի զեկույցը:

1. «Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամ» հիմնադրելու մասին (ՀՀ կառավարության նախագծի ներկայացում և հիմնավորում)

(Յու. Մուվարյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 2-րդ հարցը զեկուցեց ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հայագիտության և հասարակական գիտությունների ակադեմիկոս-քարտուղար Յու. Մուվարյանը և նշեց, որ ներկայումս համակարգված չէ Հայաստանում և օտարերկրյա պետություններում գործող հայագիտական կենտրոնների գործունեությունը: Հաճախ հայագիտական կարևորագույն հիմնախնդիրների լուծման ընթացքում առաջանում են ֆինանսական դժվարություններ: Այդ դժվարությունների պատճառով օտարերկրյա պետություններում հայագիտական կարևորագույն կենտրոններ ստիպված են դադարեցնել իրենց գործունեությունը: Ուստի, հիմնական նպատակը հայագիտության կարևորագույն հիմնախնդիրների լուծման գործընթացի ֆինանսավորումն է հետևյալ ուղղությունների գծով`

1) հայ մատենագրության վավերագրերի, արխիվային նյութերի, վիմագրության, բառարանագրական հուշարձանների ուսումնասիրություն ու թվայնացում.

2) էլեկտրոնային ռեսուրսների ստեղծում.

3) քննական բնագրերի կազմում և ծանոթագրված հրատարակում.

4) հայագիտական նյութերի էլեկտրոնային տարբերակների` համացանցով տարածման ապահովում, հայագիտական բովանդակությամբ բազմալեզու կայքերի ստեղծում և շահագործում.

5) միջազգային հայագիտական համաժողովների, ամառային դպրոցների և սեմինարների կազմակերպում.

6) օտարերկրյա պետություններում հայագիտական կենտրոններին ֆինանսական աջակցություն և նոր կենտրոնների ստեղծում.

7) Հայաստանում և օտարերկրյա պետություններում գործող կենտրոնների համար երիտասարդ մասնագետների պատրաստում.

8) հայագիտական հաստատությունների համագործակցության նպատակով գիտական խորհրդի նիստերի կազմակերպում և խորհրդի նիստերին արտասահմանյան անդամների մասնակցության ապահովում:

Դրանից բացի՝ նշեց, որ օրակարգի 1-ին հարցով ներկայացված՝ բազմալեզու ամսագրի տպագրության և միջազգային հայագիտական վեհաժողովի կազմակերպման գծով ֆինանսավորումը ևս նախատեսվում է իրականացնել ստեղծվելիք հիմնադրամի միջոցների հաշվին:

Այսպիսով, տվյալ ոլորտի համապատասխան մասնագետների ու շահագրգիռ կողմերի հետ համատեղ մշակվել է ստեղծվելիք հիմնադրամի կանոնադրության նախագիծը: Այնուհետև նա ներկայացրեց Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի հետևյալ նախնական անհատական կազմը՝

1. Ռֆաիկ Մարտիրոսյան (ՀՀ ԳԱԱ նախագահ, խորհրդի նախագահ)
2. Դավիթ Սարգսյան (ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար)
3. Արմեն Աշոտյան (ՀՀ կրթության և գիտության նախարար)
4. Հրանուշ Հակոբյան (ՀՀ սփյուռքի նախարար)
5. Յուրի Սուվարյան (ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար)
6. Վլադիմիր Բարխուդարյան (ՀՀ ԳԱԱ նախագահության խորհրդական, գիտահրատարակչական խորհրդի նախագահի տեղակալ)
7. Արամ Միմոնյան (ԵՊՀ ռեկտոր)
8. Լևոն Սարգսյան (ԵՊՀ հայ եկեղեցու ամբիոնի վարիչ)
9. Հրայր Թամրազյան (Մ.Մաշտոցի անվ. Մատենադարանի տնօրեն)
10. Գևորգ Բարդակչյան (ԱՄՆ հայագետների ընկերակցության նախագահ):

Ինչ վերաբերում է Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի ֆինանսական միջոցների ձևավորմանը, ապա ըստ նախնական հաշվարկների առաջին տարվա (2013 թվականի) համար կպահանջվի մոտավորապես 80.0 մլն դրամ, որից՝ 50.0 մլն դրամը՝ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի հաշվին, 30.0 մլն դրամը՝ ֆինանսավորման այլ աղբյուրներից: Ընդ որում, նախատեսվում է հաջորդ տարիներին դրամահավաքը կազմակերպել հիմնադրամի կողմից:

Այնուհետև նշեց, որ արդեն իսկ ստեղծվել է Հայագիտական հաստատությունների համագործակցությունը կազմակերպող գիտական խորհուրդ, որի կազմում ընդգրկված են բոլոր հայագիտական հաստատությունների ներկայացուցիչները, այն բուհերը, որոնք ունեն հայագիտության ամբիոններ, օտարերկրյա հայագիտական կենտրոնների ներկայացուցիչները: Հայագիտական հաստատությունների համագործակցությունը կազմակերպող

գիտական խորհուրդը ղեկավարում է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Ռ. Մարտիրոսյանը: Ըստ նախատեսվածի, Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի ստեղծումից հետո, կիրավիրվի առաջին նիստը, զուգահեռաբար կկազմակերպվի 2-րդ համահայկական ֆորումը: Ինչ վերաբերում է Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի աշխատատեղին, ապա այն կգործի «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի մեխանիզմով:

Երևանի պետական համալսարանի ռեկտոր Ա. Միմոնյանն առաջարկեց՝

1) որպեսզի ռազմավարական ծրագրի իրականացման գործընթացում հաստուկ ուշադրություն դարձվի հետևյալ 2 հիմնահարցի լուծմանը՝

ա. հայագիտության ոլորտում դեռևս չլուծված մասնագիտական հարցեր, մասնավորապես, քաղաքական հայագիտության շուրջ համաձայնության գալու նպատակով անհրաժեշտ է կազմակերպել կլոր սեղաններ, գիտաժողովներ,

բ. հայագիտության ոլորտում թարգմանչական լայն բազայի ստեղծման անհրաժեշտությունը: Այդ նպատակով անհրաժեշտ է ստեղծել թարգմանչական ստորաբաժանումներ, որոնք կունենան որոշակի ուղղվածություն և հնարավոր կլինի հայագետների սուր ուղղվածություն ունեցող աշխատությունները տպագրել ու ներկայացնել համաշխարհային հանրությանը.

2) ձեռնարկել միջոցներ, որպեսզի տեղական և օտարերկրյա բարեգործների տրամադրած միջոցներն ուղղորդվեն կոնկրետ հայագիտության ոլորտի զարգացմանը.

3) Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի միջոցները հետագայում ուղղել միայն այն գիտական թեմաներին, որոնք պետության կողմից չեն ֆինանսավորվում:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի տնօրեն Ա. Մելքոնյանն անդրադարձավ գիտաշխատողների աշխատավարձերի բարձրացման կամ սոցիալական փաթեթում ընդգրկելու հնարավորության հարցին և առաջարկեց պարզաբանել կլոր կնիքի վերացման պահանջը:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն Ա. Բսահալյանն առաջարկեց Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կազմում ընդգրկել նաև ՀՀ արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչ:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս Վ. Բարխուդարյանն առաջարկեց՝

1) տեղական բուհերի և ստեղծվելիք հիմնադրամի միջոցով հնարավորություն ընձեռել օտարերկրյա հայազիտական կենտրոններին և ուսանողներին հմտանալու հայերեն լեզվի իմացության մեջ:

2) Հայազիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի կանոնադրության մեջ ներառել հայազիտական գրականության հրատարակությանը վերաբերող կետ:

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի գործադիր տնօրեն Գ. Հարությունյանն առաջարկեց համագործակցել նաև արհեստավարժ սոցիոլոգների, էթնիկ հոգեբանների, քաղաքագետների հետ և արդյունքում կազմել առավել արդիական թեմաների ցանկ, որը կառաջարկվի Հայազիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամին՝ մրցութային եղանակով ֆինանսավորելու համար:

ՀՀ սփյուռքի նախարարի տեղակալ Վ. Ջիլավյանն առաջարկեց Հայազիտության ոլորտի զարգացման 2012-2025 թվականների ռազմավարության իրականացման միջոցառումների ծրագրում որպես համակատարող մարմին ներգրավել նաև ՀՀ սփյուռքի նախարարությանը:

ՀՀ կրթության և գիտության նախարար Ա. Աշոտյանն առաջարկեց հայազիտության ոլորտի ասպիրանտներին նախօրոք նախապատրաստել, քանի որ առկա ուսուցման տեղերը փաթուր են՝ ասպիրանտների օտար լեզվի ոչ պատշաճ իմացության պատճառով:

Այնուհետև նա կարևորեց հայոց պատմություն գրելու քաղաքական պատվերի հարցը:

ՀՀ վարչապետ Տիգրան Մարգարյանը նշեց, որ՝

1) այսուհետ ՀՀ-ում իրականացվող բոլոր գործարքներն իրականացվելու են (կնքվելու են) բացառապես էլեկտրոնային ստորագրությունների համակարգի միջոցով, որի վերաբերյալ հանրությունն իրազեկվել է:

2) հայազիտությանը, որպես գիտության մի ճյուղ, տրվել է առաջնահերթություն, որի արդյունքում յուրաքանչյուր տարի ՀՀ պետական բյուջեից հատկացվում է համապատասխան չափով գումար: Այնուհանդերձ, հայազիտության պահպանման գործում իր նշանակալի դերակատարությունն ունի նաև հայկական բանակը, որին և ուղղվում են զգալի միջոցներ:

3) նպատակահարմար է, որպեսզի Հայազիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կազմում ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի փոխարեն ընդգրկվեն ՀՀ

կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետը, ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալը և Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու ներկայացուցիչը:

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) առաջարկել ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Ռ. Մարտիրոսյանին՝

ա. Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կազմում ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի փոխարեն ընդգրկել ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետին և ՀՀ արտաքին գործերի նախարարի համապատասխան տեղակալին,

բ. Հայագիտության ոլորտի զարգացման 2012-2025 թվականների ռազմավարության իրականացման միջոցառումների ծրագրում որպես համակատարող մարմին ներգրավել նաև ՀՀ սփյուռքի նախարարությանը.

գ. առանձին քննարկման առարկա դարձնելու նպատակով վեր հանել բոլոր հայագիտական ուղղվածության թեմաները՝ հետագայում դրանց ֆինանսավորման աղբյուրները որոշելու համար.

2) հանձնարարել ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ Ա. Միրզախանյանին՝ նախապատրաստել ՀՀ վարչապետի նամակ՝ ուղղված Ամենայն Հայոց կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ին՝ Հայագիտության հարցերով խորհրդի և Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կազմերում համապատասխան ներկայացուցչի թեկնածության առաջադրման վերաբերյալ:

2. Կանոնադրական խնդիրներ

(Ա. Միրզախանյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 3-րդ հարցի կապակցությամբ ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ Ա. Միրզախանյանը նշեց, որ ներկայացված փաստաթղթում առկա են իրավաբանական բնույթի խնդիրներ:

Քննարկումներից հետո որոշվեց՝

հանձնարարել ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ Ա. Միրզախանյանին՝ ՀՀ կառավարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի հետ համատեղ.

ա. քննարկել Հայագիտության հարցերով խորհրդի աշխատակարգը՝ այն արդիականացնելու և լրամշակելու նպատակով,

բ. «Հայագիտության ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամ հիմնադրելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը համապատասխան լրամշակելուց հետո ներկայացնել ՀՀ կառավարության նիստի քննարկմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ